ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 16-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Օդային եղանակով նյութերի ցրման ծառայությունների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի հունվարի 15-ին ժամը 12:35:22-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2026 թվականի հունվարի 16-ին ժամը 15:00-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Ելնելով Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների պահպանման անհրաժեշտությունից, ինչպես նաև հաղթող մասնակցի հետ կնքված պայմանագիրը թափանցիկ և արդյունավետ կառավարելու տեսանկյունից, առաջարկում ենք տեխնիկական բնութագրերում կատարել ներքոհիշյալ փոփոխությունները՝
քանի որ ծրագրային հավելվածից արտահանված հաշվետվությունը տեսականորեն և պրակտիկորեն կարող է կեղծվել, ուստի առաջարկում ենք, որ նախ կատարողը ունենա և պահպանի կատարված աշխատանքները առկա համապատասխան ծրագրում, իսկ ըստ անհրաժեշտության՝ տրամադրի նաև ծրագրային հասանելիություն, կամ համատեղ դիտելու հնարավորություն, կատարված աշխատանքների ռեալ թափանցիկությունն ապահովելու համար: Ըստ այդմ՝ կատարողական ակտին կից արտահանված սխեմայից բացի, կլինի այն ծրագրի դիտարկման հնարավորություն, որտեղից այդ սխեման արտահանվել է, և որտեղ արտացոլված են՝
1 թռիչքների քարտեզ-սխեմաները և սխեմատիկ հետագծերը՝ աշխարհագրական դիրքով,
2 աշխատանքի ծավալները՝ հեկտարներով,
3 ծախսված նյութը՝ լիտրերով:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից, իսկ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում հաշվի է առնվել հնարավոր բոլոր մասնակիցների կողմից ներկայացվող տեխնիկական միջոցով ծառայությունների մատուցումը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին:**

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner@env.am:

«ՇՄՆ-ԲՄ-ԾՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով